

ԱԶԳԱՅԻՆ

Արարողի անցեալ համարում հրատարակեցինք Ս. Աթուոյս ձեմարանի հնգետասաներորդ տարեդարձի օրը կարգացուած Տեղեկագիրը 1888 — 89 ուսումնական տարւոյ: ձեմարանի Հայր տեսուչ Նահապետ արեղայն այդ տեղեկագրի մէջ յայտնում է այն միտքը, թէ Հայոց բազմակարօտ ազգը մեծ ակնկալութիւններ ունի ձեմարանից: Եւ իրաւացի են ազգի ակնկալութիւնը, որովհետեւ կարօտեալին բնական է միշտ ակն ունիլ, սպասել իւր կարօտն մի տեղից առնելու: Հայ ազգն ինչի՞ է կարօտ: Նա ոչ հացի է կարօտ և ոչ էլ զգեստի, որքան հոգեւոր կերակրի, որով միայն պիտի կենդանութիւն ոտանայ հոգեպէս, և երջանկութիւն վայելէ, որ մասն և բաժին նշանակած է տմեն մարդուս բարի Արարչից, բոտ ընտրութեան իւրաքանչիւրի ազատ կամաց: Ահա այդ երջանկութիւն պարգեւող հոգեւոր կերակուրն է Հայոց բազմակարօտ ազգի ակնկալութիւնը Ս. Աթուոյս ձեմարանից: Այդ հոգեպարար կերակուրը—քրիստոնէական վարդապետութեան ճշմարտութիւնքն Ժողովրդոց մատակարարողը Ս. եկեղեցին է իւր եկեղեցական պաշտօնէից միջնորդութեամբ: Ի՞նչ է բազմակարօտ հայ ազգի ակնկալութիւնը ձեմարանից—միայն և միմիայն ընտիր եկեղեցականներ—բարի և անարատ վարուք զարգարուած և հրմտութեամբ աստուածային գրոց, կենցաղօգուտ գիտութեամբ հարուստ մօռք եկեղեցականներ ստանալ նրանից. որոնք կարող լինէին լցուցանել Հայ ազգի հոգեւոր—մտաւոր պիտոյքներն, ինչպէս նա իւր երեսի քրտինքով առատապէս լցուցանում է իւր մարմնաւոր պիտոյքները: Իրաւացի են ասացինք ազգի ակնկալութիւնը ձեմարանից, որոյ հիմնարկութեան և պահպանութեան հենց խորհուրդն է ազգի այդ մեծ ակնկալութիւնքն իրագործելը: Նոյն յոյսը տածում են ձեմարանի վերայ թէ մեր Վեհափաւ Հայրապետն և թէ Ս. Աթուոյս

միաբանութիւնն, որոնք ամենայն խնամք և զոհողութիւն ա-
նում են, որ այդ հոգեւոր հաստատութիւնը յիրաւի կատարէ
ազգի ակնկալութիւններն, որոնք առաւել ևս են եկեղեցական
դասի ակնկալութիւնքը: Ամեն ակնկալուք պարտական են աշ-
խատել, զոհել, որ իրանց ակնկալածին հասնեն. մը այգեգոր-
ծը կամ երկրագործը եթէ իւր տնկածն ու սերմանածը չիւնա-
մէ, յոյս կարող է տածել պտուղ ստանալու: Բայց երբ իւր
սերմանածը խնամում է, իւր ժամանակին նորա ջուրը մատա-
կարարելով և նորա մէջ բուսած սրտները քաղահան անելով—
վայելում է և իւր ակնկալած պտուղն իւր աշխատանքից—
սա աշխարհիս մէջ ամեն արդիւնագործութեան անհրաժեշտ
պայմանն է: Այգու ընդարձակութեան համեմատ պիտի լինին
և նորա պահպանութեան ու արդիւնաւորութեան համար կա-
քւեւոր ջուրն ու միջոցները: Աթուոյս ճեմարանն ազգիս ամեն-
ընդարձակ և ամենակարեւոր հոգեւոր այգին է, որոյ պահպա-
նութեան և արդիւնաւորութեան համար անհրաժեշտ են և
համեմատ միջոցներ: Մեծ են բազմակարօտ հոյ ազգի ակնկա-
լութիւնք այդ այգուց—բայց ի՞նչ և ո՞րքան են նոյն ազգի աշ-
խատանքն ու խնամքն այդ այգու վերայ, իւր ակնկալութեանց
հասնելու համար: Ուր իրաւունք կայ ակնկալելու, այնտեղ
անհրաժեշտ է և պարտականութիւնը հոգալու այդ ակնկալու-
թեանց իրագործման համար: Իրաւ է ազգը տնկել է Ս. Ա-
Աթուոյս հոգեւոր ընդարձակ այգին—ճեմարանը, ցանկով պա-
տել է նրան—բայց ո՞ր են խնամքը նորա պահպանութեան և
արդիւնաւորութեան համար: Այս ծանր բեւը ոչ իրաւամբ
թողել է ազգը միայն Ս. Աթուոյս վերայ, իրան վերապահելով
նորա արդեանց ակնկալութեան իրաւունքը: Այնքան մեծ են
եղած և են Ս. Աթուոյս Հայրապետների և միաբանութեան
հաւատն ու յոյսն այդ այգու արդիւնաւորութեան վերայ, որ
ահա 15 տարի է անտրտունջ տանում են այդ ծանր բեւը,
խնամելով ճեմարանն իրանց ապրուստ նշանակած հոգեբաժին,
պտկաւորամ կոչուած կոպէկանոց արդիւնքներով ու աւերակ
ուխտատեղեաց լումաներով: Ոչ ոքին իրաւունք չէ տրուում
այս խօսքերու գանգատանաց և տրտնջանաց ձայն համարելու,

որովհետեւ Ս. Աթոռս իւր բոլոր կազմութեամբ այնքան նախանձախնդիր է մեր Ս. եկեղեցու բարեգալութեան և իւր հօտի հոգեւոր երջանկութեան, որ առանց տրոնջանայ և մեծ հաւատով ու յուսով կշարունակէ իւր խնամքը ճեմարանի վերայ անձնագոհութեամբ, վասն զի հասկանում է և հաւատում, որ այդ հաստատութիւնն ամրագայում երկուսի էլ եւ Ս. եկեղեցու պայծառութեան եւ հօտի հոգեւոր երջանկութեան աղբիւր պիտի դառնայ իւր դաւտիարակած և կրթած եկեղեցականներով, Այլ այս ձայնն է լսի ձայն պարտականութեան, որով Ս. Աթոռս միշտ պիտի յիշեցնէ իւր հօտին պարտաճանաչ լինելու, յիշեցնէ Փրկչի խօսքը թէ, տեւք և տացի ձեզ, այսինքն աշխատեցէք, որ Աստուած էլ տայ ձեզ ծողովրդեան ամենօրեայ պահանջն է հոգեւոր իշխանութիւնից տալ իրան լաւ քարոզիչներ ու ընտիր հեղեցականներ, — ուստի՞ առաջ կգան սոքա, եթէ ոչ ամեն միջոցներով ապահոված բարեկարգ գպրոցներից, որոնց գլուխն է Ս. Աթոռոյս ճեմարանը, եւ որքան հեշտ է հայ ազգին ստանալ այստեղից իւր ակնկալածներն եթէ նա միայն ցանկանայ իւր պարտքը ճանաչել ու կատարել, եկեղեցական դասի հետ ձեռք ձեռքի տուած պահպանել և խնամել այդ իւր այգին, որպէս զի վայելէ նորա արգասիքն առաւելութեամբ, Ազգը միջոց շատ ունի — միայն զարթնի նորա մէջ անկեղծ ցանկութիւն և համոզուի որ իւր ակնկալութիւնքը ճեմարանից իւր աշխատանքով ստանալն է իրաւացի և արդարութիւն, Կարիք չկայ և ոչ էլ արդարութիւն է պահանջել, որ այս ինչ անձն կամ հասարակութիւն իւր վերայ առնէ ճեմարանի բոլոր հոգսը — ոչ բայց որ հայ հասարակութեան մէջ չկան մի քանի այնպիսի կարող անձինք, որոնք չկարողանային իրանց մարմնաւոր զաւակաց հետ և մի մի հոգեւոր զաւակ դաստիարակել ճեմարանում իւրեանց հաշուով, չենք յիշում բազմաթիւ հարուստ անզաւակ և անյիշատակ անձանց, որոնք ծնում են, փարթամանում են ի հաշիւ իւրեանց հասարակութեան և անհետանում, առանց նորան որեւէ շահ տալու կամ ի՞նչ ծանրութիւն է իւրաքանչիւր նշանաւոր հայ հասարակութեան կազ-

մեկ մի մի փոքրիկ ընկերութիւն ճեմարանում՝ իրանց ապագայ հովիւներ և քարոզիչներ պատրաստել տալու համար: Եթէ ամենուրեք կազմուում են ընկերութիւնք մի ծխական գործից պահպանելու, կամ այլ որեւէ հաստատութեան համար, ինչո՞ւ չպիտի կազմուեն նոյնպիսիք եւ ապագայ ընտիր եկեղեցականներ ու քարոզիչներ պատրաստելու գիտաւորութեամբ: Երբ հայ ազգն արգէն իրան նախանձախնդիր է ցոյց տալիս իւր կեանքի զանազան ճիւղերի բարեկարգութեան և բարեգարգութեան համար, հոգալով ամեն կերպ ճոխացնել իւր մարմնաւոր կեանքն, որքան աւելի ևս նրան իբրեւ կրօնական ազգի վայել է և պարտականութիւն իւր հոգեւոր կեանքի ճոխութեան վերայ ևս հոգալ — մասնակցելով իւր միակ հոգեւոր ճեմարանի ապահովութեան, ճեմորանի, որ մեր Ս. Եկեղեցուն պիտի տայ ժողովրդեան ցանկացած եկեղեցականներն և քարոզիչները, ի բարեգարգութիւն այն եկեղեցուն, որ միշտ եղել է և պիտի լինի մեր ազգին կենդանարար ս. կաթ ջամբողը, նորա միխթարիչը, նորա գոյութեան յորատեութեան և ապագայ երջանկութեան ալքիւրն ու հիմքը: Ձեռք կարծում, որ մեր բազմակարօտ ազգը համաձայնի զանալ իրան և իւր զաւակաց վերոյիշեալ բարիքը. ուրեմն թող սթափի և լականութիւնը մի կողմ թողնուի խորհէ իւր ապագայի վերայ այրաբար և գործէ այրաբար, Առտուած էլ հետը կլինի և կպսակէ նորա աշխատանքը, կատարելով նորա ոչ չարաչար որոնած այլ արդար և անկեղծ բարի ակնկալութիւնքը: Այս յուսոյ և անձնանուէր գործունէութեան մէջ է մեր բազմակարօտ ազգի ակնկալութեանց իրագործումն, որ է եւ նորա փրկութիւնն ու կեանքը: